

## ՌԱՅՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԵՐԿՐԻ ԽՈՍՔ.

Տպագրութեան տալով նազարեանի, Նայբանդեանի, Դամառ-Քաթիպայի, Քեր. Պատկանեանի, Շահազիզի և Ռաֆֆու նամակները, մենք նպատակ ենք ունեցել մասամբ իւիք նպաստել այն քողի բարձրացմանը, որ ալեոր Քրոնոսը ձգել է նրանց և նրանց ժամանակների վրայ:

Առ հասարակ նման նամակները չափազանց կարեար են զրական-ոլատմական տեսակէտից:

Մեր մտաւոր վերածնութեան ռահվիրաների այդ նամակները, բացի իրենց զուտ բանասիրական նշանակութիւնից, արժեքաւոր են նաև նրանով, որ նախ և առաջ մատակարարում են մեզ շատ թանկաղին նիւթեր իրենց ժամանակների ազգային-հասարակական կեանքի ուսումնասիրութեան և այս կամ այն աչքի ընկնող անհատի զնահատման համար, և երկրորդ՝ մեծ լոյս են սփռում իրենց նամակաղիրների՝ կենսագրութեան վերայ:

Նամակը — մանաւանդ մտերմին, մերձաւորին զրած նամակը — զրական տեսակներից ամենաանկեղծը կարելի է համարել. Հետեւապէս, այդպիսի նամակը ամենից ճշգրիտ արտայայտութիւնն է զրողի անձնաւորութեան, նրա ներքին յոյզերի ու ապրումների:

Այդ հանգամանքն ևս իր կողմից կրկնապատկում եռապատկում է մեր հրատարակելիք նամակների արժեքը, որովհետեւ այն անձնաւորութիւնը, որին ուղւած են այդ նամակները, յիրաւի մի այնպիսի մօտ, մի այնպիսի բարեկամական յարաբերութեան մէջ է զանւել վերոյիշեալ նամակաղիրների հետ, որ կեղծիքը սուտը նրանց նամակներում տեղ ունենալ չէր կարող, որ միայն ճշմարտու-

թիւնը կարող էր նրանց փոխադարձ մտերմութեանը ընթացակցել:

Այդ անձնաւորութիւնը Ա.ԵՐԻՆ-Աղուլիցի Մելքոն Գասպարեան Փանեանցն է:

Նրա մանրամասն կեանքն ու զործունեաւթիւնը մի այլ պատեհ ժամանակի թողնելով, այժմ պարտականութիւն եմ Համարում ԱԱրարատի յարդելի ընթերցովներին երկու խօսքով ծանօթացնել այդ բազմաշխատ բայց անյայտ—զործչի հետ: Դա, կարծում ենք, անհրաժեշտ է նաև նամակաղիրներին ու նրանց զրութիւնների ողին լաւ հասկանալու տեսակետից:

Պէտք է խռոտովանել, որ Աղուլիսը մեր զրական-Համարտական կեանքում այս կամ այն կերպ աշքի բնկնող զեմքեր բաւական շատ է առել. սակայն նրանք բոլորն եւ կարելի է առել—բարձրացել, ականաւոր են զարձել շնորհիւ իրենց ստացած ուսման, իրթութեան: Նրանք ունեցել են, ի հարկեւ, բնատուր բնողունակութիւններ, իսկ զպրոցը ծաղկելու և պառաջներ տալու շափ սնուցել, ջերմացրել է այդ ընդունակութիւնները:

Մելքոն Գասպարիչը մի եղակի բացառութիւն է նրանց թւից. նա զրկւած է եղել ուսման կենսատու ջերմութիւնից: Բայց ունեցել է ընդունակութիւն, մեծ ընդունակութիւն, ունեցել է զրա հետ միասին նաև յամա, անընկելի աշխատունակութիւն: Եւ ահա այդ տակուն աշխատասիրութեան շնորհիւ, ընութիւնից նրա մէջ զրւած ընդունակութիւնն անում զարգանում է, իր հետ բարձրացնելով նմանանապէս առ ուսու առպաշտարովներին (այդպէս կոչւում էին զրադիտութիւն սպարագնալ կոյսերին Աղուլիսում) ուստի Մելքոնին:

Փանեանցի վերելքն սկսում է Մոսկվայում: Ընկնելով հեռուոր Խուսաստանի հինաւուրց մայրաքաղաքը, նա շուտով աշքի բնկնող զերք է գրաւում այնտեղ—թէ՛ բարձրատինան անձերի մօտ և թէ՛ հայ ազգային հասարակական կեանքում:

Այսուհետեւ պաշտօնները իրենք են զոլիս ու բազմում

նրա գուռը: 1868 թւից նա ընտրում է երեցին Մոսկվայի Հայոց Յ հկեղեցիների, ապա՝ խորհրդական վարչութեան Լազարեան ճեմարանի, ապա՝ «Դասովարեան» Ապաստարանի խորհրդի անդամ, ապա՝ Տհաևս Նոյն ճեմարանում Եւ այդ բոլոր պաշտօնների մէջ աղնուութիւնն ու շիտակութիւնը երբեք շգաւառանեցին նրան: Նա ծառայեց անրասիր, եռանողով, նւիրւած: Ապացոյց զրան՝ Երկարամեայ մնայնութիւնն իր բոլոր պաշտօններում և այդ առթիւ ստացած Գոհունակութեան թերթերը, Աստիճաններին ու շքանշանները<sup>1)</sup>:

Եյնելով շարունակ Մոսկվայում, նա ծանօթանում է մեր ժամանակի մոտաւորականութեան պարագլուխների հետ: Առ նրանց ամենքին զրաւում ձգում է դեպի իրան և իր հետ կապում—շնորհիւ մի կողմից իր աչքի ընկնող պիլքի, միւս կողմից՝ իր ջերմ վերաբերմունքի: Նրանց անկեղծ բարեկամն էր նա: Հարկ եղած դեպքում նրանք բոլորն էլ զիմում էին նրան, և նա ոչ ոքի չեր մերժում: ամենքին էլ աջակցում էր:—մեկի զրքերն ու հեղինակութիւնները վաճառելով, միւսի համար՝ միջոցներ հայթայթելով, երբորդին՝ խրախուսելով, չորրորդին՝ բարեկամական խորհուրդներով ևայլն:

Ահա թէ, ինչու նրանց ամենքի էլ նամակների մէջ միշտ միևնոյն շեշտն է, հնչում ներդաշնակօրէն—շեշտը ակնածութեան և խորունկ յարդանքի դեպի Մելքոն Դաստիարիչ:

Դու ես, սիրելի ընթերցող, կարդալով Նազարեանի, Նալբանդ Եսլի և Գամառ-Բաթիստայի հման պատկառելի գեմքերի նամակները և տեսնելով նրանց այդօրինակ վերաբերմունքը, Դու ես յարդանքի սուրբ զդացումով և լցում դեպի Ճիշտամեյն այն մարդու, որ իր հայրենի անվրդով խողաղութեան մէջ այնպէս անյայտ, այնպէս ան-

1) Անէր Պետական խորհրդականի աստիճան և Ա. Անասյի 2 աստ., Ա. Ստանիսլավի 2 աստ., Ա. Անասյի 3 աստ., և Ա. Ստանիսլավի 3 աստիճան:

աղմուկ 1901 թւին կնքեց իր մահմանացուն 76-ամեայ հասակում:

Եղբայր Քաղցր պարտականութիւն ենք համարում անկեղծ շնորհակալութիւն յայտնելու նրա եղբօրորդի մեջ. պ. Ալեքսան Փանեանցին, որ իր հօրեղոր նամակները սիրայօժար կերպով մեր տրամադրութեան տակ զնելով, նրանցից օգտւելու և տրամադրութեան յանձնելու իրաւունքը աւեց մեզ:

Յ. Տէր-Յակովիչ:

Աեր.—Եպուլիս:

25 յունիսի 1913 թ.

ԽԱՅՖՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ<sup>1)</sup>.

I.

Թիֆլիս 10 դեկտեմբ. 1879 ամի,

Մեծապատճե.

Պարսկ Մելքոն Փանեանց,

Թող ներփի ինձ, որ առանց Զեղ հետ ծանօթ լինելու, ես վստահացայ ձաւուրացնել Զեղիմ յանձնաբարութիւններով<sup>2)</sup>: Բայց Դուք հասարակաց բարեկամ եք, և մանուանդ այն անձերի, որոնք գործում են կրթութեան և զրականութեան ասպարեզում: Այդ Դուք տպացուցիր Զեղ բարեկամութեամբը հանդուցեալ նաղարեանցի հետ:

Ես Զեղ մասին շատ եմ լսել Զեղ հայրենակիցներից, որոնց հետ բախտ եմ ունեցել ծանօթանուու, և իմ քազած տեղեկութիւնները երաշխաւում են, որ Դուք սկայծեւիս հրատարակութեան գործի մէջ կը լինէք նոյնքան բարի, որպէս եղել եք ամեն մի տղային և հասարակական գործերում: Սեղմում եմ Զեղ բարեկամական ձեռքը

Յ. Մելիք-Յակովեանց

1) Դրամ են 1879—1888 թ. Յ. Յ. ընթացքում. Թող ընդամենը 55 հատ են: արոնցից մենք տպագրութեան յանձնում ենք միայն նրանք, որոնք որևէ հասարակական-պատմուկան նշանակութիւն ունեն: Յ. Տ. Յ.

2) Պահանջման հեղինակի ուղագրութիւնը. կէտաղրութիւնը եւ միւս գրական-լեզւական առանձայնատկութիւնները: Յ. Տէր-Յակ.

2) Այս նամակի մէջ ներփակ ուզարկուած է: Մ. Փանեանցին նաեւ մի տողագրութեան ներթ սկայծերից բաժանորդացրութեան ձամար—արդ նպատակով պատրաստուած յատուկ տպագիր դիմումի հետ միասին:

Յ. Տէր-Յ.

2.

23 Նոյեմբ. 1880 ամ. Թիֆլիս.

Թանգաղին բարեկամ

Մելքոն Կառպարիչ Փանհանց,

Չեր Համակը ստացայ. շնորհակալ իմ Չեր բարեկարտութեան համար, որ արտայայտվում է Չեր գրութեան իւրաքանչիւր տողից. Չեր համակրութիւնը դէպի իմ անմիխթար զարծունեութիւնը չափազանց խրախուսում է ինձ, որպէս բարեկամի և ազգասիրի անկեղծ սրտից բղիսած քաջալերական խօսք. ակայծերից տպագրութիւնը հակառակ իմ ցանկութեան, արդարի, բաւական ուշացաւ. Ես ամեն ջանքով աճապարում էի, որ այս աշխատութիւնը, իբրև ժամանակակից վէտ, իբրև մեր մորերը զրադեցնող հարցերը շօշափող մի երկասիրութիւն, որքան կարելի էր, շուտով լոյս տեսնէր. Բայց յետաձգութեան պատճառը պէտք է որոնել երկու գլխաւոր պատճառների մէջ. նախ, որ ևս մինչեւ այսօր իմ բաժանորդներից չկարողացայ այնքան փող ստանալ, որ զոնէ տպագրութեան ծախորը ծածկէր. Երկրորդ, ես յոյս չունեի, որ այս աշխատութիւնը տեղւոյն ցհնզուրայից ամրողջապէս անցնէր. Տանկաստանի Հայոց վերջին շարժումներից յիսոյ, այսուղի ցենզուրան սկսեց բաւական խստութեամբ վերաբերմի դէպի ամեն մի գրուածք, որ կարող էր նրանց մէջ ազգասիրական զգացմունք և ազատասիրական ողի ներշնչել. Այդ մի բախտ էր, որ Շինութը անցաւ, թէև նրա ամենազեղեցիկ տեղերը ջնջուեցան «Մշակի» մէջ տոլվիլու ժամանակ։ Բայց ես մեծ զժուարութիւն կրեցի, մինչեւ կարողացայ կրկին հրաման ստանալ երկրորդ տպագրութեան համար։

Այս հանգամանքը ի նկատի առնելով, ես գրեցի պ. Գարբիկ Միրզօհանցին, որը Մոսկվայի համալսարանի ուսանող է, որ յունան առնէ ակայծերը՝ Մոսկվայում տպագրելու Այնուղի ցհնզուրան աւելի աղատ է, թուղթը աւելի էժան է և տպագրութիւնը աւելի մաքուր։ Տակաւին պատասխան չեմ ստացել, բայց յոյս ունեմ, որ կը նորունէ, որովհետեւ այդ պարոնը, որպէս իմ լաւ բարեկամ, նոյնուկու և մեր ամենաեռանդաս և զործունեաց երիտասարդներից մէկն է։

Պարոն Միրզօհանցը մի երկու ամիս տուած գիտել էր ինձ, ինսդրելով, որ եւ իրաւունք առմ Շինութը՝ Մոսկվայում տպագրելու, բայց ես չկարողացայ կատարել նրա զեղեցիկ ցանկութիւնը, որովհետեւ նրանից առաջ արգէն իրաւունք էի տուած նուշիում տպագրելու։ Այս քաղաքից «Շինութի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բաւական լաւն է և տպագրութիւնը մաքուր, երեւում է այնուղի տպարանը այժմ փոքր ի շատէ կանոնաւորված է։

Հարցնում էք, թէ ինչու այստեղի Տպագրական ընկերութիւնը յանձն չէ առնում իմ զրքերը ի լոյս ընծայելու Բարեկամ, մի խարվեցէք այս տեսակ խոշոր անուններից: Մեղանում մասնաւոր մարդիկ աւելի շատ դործ են կտարում, քան թէ ամբողջ ընկերութիւններ: Այդ ընկերութիւնը իր չնչին դրամագլխով իրան նպատակ է զրել հրապարակել մանր, ըստ մեծի մասին մանկավարժական զրքոյեններ, և ոչ թէ ընդարձակ, նշանաւոր աշխատութիւններ ժողովրդի մէջ միար և ընթերցանութիւն տարածելու համար: Բացի դրանից, ընկերութեան քննիչ մասնաժողովը այնպիսի անձննաբնիրից է բաղկացած, որ հազիւ թէ փոքր ի շատէ իր հեղինակութիւնը յարգող մի զրող կըցանկանար իր աշխատութիւնները նրանց քննութեանը ենթարկել:

Դրում էք, թէ ևս մի մեծ յանցանք դործած կլինեմ, եթէ զրկեմ մեր հասարակութեանը իմ զրաւոր աշխատութիւններից: Ընդունում եմ Զեր անկեղծ, բարեկամական յանդիմանութիւնը: Բայց հարկաւոր է, որ հասարակութիւնն էլ իր կողմից թէ բարոյագէս և թէ նիւթոպէս քաջալերէ իր զրականութեան անբախտ մշակներին: Եթէ Վենետիկցիք կարճ ժամանակում կարողացան այնքան ահազին քանակութեամբ զրքեր տարածել հայոց աղզի մէջ, զրտ զլիսաւոր պատճառն այն էք, որ նրանք ունեին մեկենասներ, և նրանց զրքերի մեծ մասը զարգարած էին զանազան Դրւզեանների և Տառեանների անուններով: Բայց ուր է մեր հարուստների կողմից այս տեսակ աղջասիրական բարեկարութիւնն Ընդունեցէք իմ խորին յարգանքը՝

Յ. Մ. Մելիք-Ցուկովեան.

Յ. Գ. Գեայծերը՝ թէ վաղ թէ ուշ կը տորիի, զրանում առավելոյն մի ունեցէք, շարունակեցէք Զեր բաժանորդագրութիւնը ևս սպասում եմ ալ. Միլզօնանցի պատասխանին, եթէ նա յանձն կառնէ Մոսկվայում տպագրել տալ, Զեր մօտ զանոված փողերը կը յանձնէք նրան, խոկ եթէ ոչ, ևս ստիպված կլինեմ այստեղ տպագրել տալ:

Զեր պահանջած «Մշակի» համարները պատուիրեցի խմբագրատանը ուղարկել Զեր:

Ես պատրաստել եմ մի պատմական վէպ ևս «Դաւիթ-Շէլչ» անունով, որ շուտով կսկսի տպվել «Մշակի» մէջ: Վէպի բովանդակութիւնը առնված է Դաւիթ Բէկի՝ Սիւնեց իշխանի կեանքից: Դործողութիւնների մի մասը կտարվում է Զեր հայրենիքում:

Յ. Մ.

(Շարուհակելի)